կամ և քաղաքական չքեղ ընթացքը… բայց Միլտոնն ըսելով արդեօք ոտերնիս իրեն կը գրաւուի… Արդարև բարեբաղդ են անոնք՝ որոնք իրենց փառացը հետ արտասուաց կաթիլ մ՚ ալ ստացեր են. այն ատեն իրենց փառքը մեր սրտին մէջ անջինջ կը տպաւորուի, և այն է բանաստեղծի մը ստոյգ և տևական անմահութիւնը։

Գալաօ-ռնգեղջիւր :

Բնութեան սովորականէն դուրս ցուցըցած արարածներէն մէկն ալ կրնայ սեպուիլ իրաւամբ Գալաօ-ռնգեղջիւր ըսուած թռչունը՝ իր կտուցին մեծութեանն համար։ Աս թռչունս թէպէտ շատ նուազած է հիմա, բայց տակաւին կը գտնուի Ափրիկէ և Ամերիկա։ Գալաօի կտուցը այնպիսի դիրքով մը հաստատուած է գլխին վրայ՝ որ կարծես թէ իր կերակրիկը ծամելը աւելի դժուարացընելու համար եղած է։

Աս թռչունիս գլուխը համեմատութեամբ որչափ որ պզտիկ է, ընդհակառակն կտուցն ալ այնչափ աւելի տգեղ, խոշոր ու կորանձև է. և այն աստիճանի տկար որ հազիւ իր աւարը կրնայ խածնել, որովհետև այնչափ աւելի ծամելեաց կարողութիւնը կը տկարանայ, որչափ որ զօրութեան կեդրոնէն հեռու կ՚իյնայ. երկայն լծակի մը նման որ այնչափ անզօր կ՚ըլլայ, որչափ որ իր կեդրոնական կէտէն կը հեռանայ։ Աս օրինակս շատ ճիշդ կը տեսնուի աս թռչունին վրայ։ Միայն կտուցին ծայրը կրնայ ծառայեցընել. որովհետև ինչուան հոն արդէն կտուցին երկու շրթունքները անանկ անհաւասար և անպատշաճ են իրարու որ ճիշդ մէկզմէկ չեն շօշափեր. և անանկ կակուղ և դիւրաբեկ են որ ամենաթեթև հարուածէ մըն ալ կրնան բեկանիլ կամ վիրաւորուիլ. այնպէս որ խեղճ կենդանին չկրնար բան մը ուտել՝ առանց կտուցին մէկ կամ միւս կողմը հարուածելու. զորն որ քիչ մը ատեն գործածելէն ետև բոլոր օրը ալ անկարող կ՚ըլլայ ուրիշ բան ծամելու, որովհետև կը բթանայ ու կը խանգարի կտուցը, նման դանակի մը բերնին աւրուելուն։

Այս անկատարութիւնները ըստ բաւականին նուազ կ՚ըլլային թէ որ կտուցին համեմատ ստուար լեզու մըն ալ ունենար. բայց խեղճը անկէ ալ զուրկ է, և ընդհակառակն խիստ պզտիկ ու կարճ լեզու մը ունի՝ որով և սովորական լեզուաց գործողութիւնն անգամ չկրնար ընել. և փոխանակ օգտի աւելի ևս արգելք կ՚ըլլայ բերնին մէջ։

Կենդանւոյս վերին ծամելեաց վրայ կը բուսնի եղջերային գոյացութիւն մըն ալ որ ութ բթամատ երկայնութիւն և չորս ալ լայնութիւն ունի արմատին կողմը, որ քիչ մը առջևով երկըննալէն ետքը՝ դէպ ՚ի վեր կը ցցուի ռնգեղջիւրի եղջիւրին պէս, որով կտուցը՝ որ արդէն տկար է իր հարկաւոր գործողութիւններն անգամ կատարելու համար, աւելի կ՚անկարողանայ երբ աս ալ վրան կը ծանրաբեռնի առանց ուրիշ կողմանէ կտուցին նպաստ մը աւելցընելու։

Գալաօ-ռնգեղջիւրին երկայնութիւնը գլխէն մինչև պոչին ծայրը երեք ոտքէն աւելի է. իր կազմութեանը մէջ քանի մը նմանութիւններ կը տեսնուին ագռաւին հետ, և մանաւորապէս իր փետուրներուն վրայ՝ որոնք փայլուն ու սեւ են. միայն պոչին չորս կողմը ճերմակ վերջաւորով զարդարուած է, որ բոլորովին տարբեր երևոյթ մը կու տայ փետուրներուն։ Յօնքը և արտևանունքը սեաւ և տափակ են, իսկ ոտքերն և մատուըները երկայն և թուխ թեփերով ծածկուած։ Ինչուան հոս աչքի տգեղ երևնալու բան մը չենք տեսներ Գալաօ-ռնգեղջիւրին ոչ կազմութեան և ոչ իր միակերպ գոյնին մէջ։ Բայց իր կտուցին և անոր վրայի հանգրիճաձև եղջիւրին գալով կը տեսնենք որ նոր տեսակ, այլանդակ ու տգեղ բան մըն է։ Երեսին բոլոր ստորին մասը ծածկուած է այս կտուցովս. իր կիսադէմ երևոյթը և անոր վրայի նորատե-

Գալաօ-ռնգեղջիւր.

սիլ զարդը՝ ոչ թռչնոյ կտուցին, ոչ կենդանեայ ծնօտին և ոչ ալ ձկանց բերնին կրնայ նմանցուիլ, որուն տգեղութիւնն աւելի զգալի կ'ըլլայ իր գոյնէն որ փետուրներուն գոյնին նման չէ։ Գալաօի եղջիւրը, կամ թէ աւելի ճշդութեամբ ըսելով սաղաւարտը, գեղեցիկ կարմիր գոյն մը ունի վերին մասերուն վրայ, իսկ ծայրը քրքմագոյն դեղին է, երկու սեաւ գծերով բաժնուած վերէն՝ի վայր։ իսկ կտուցին ստորին մասը սև է, և դեղնագոյն կարմիրի զարնելով կը հասնի մինչև վերի ծայրը, որով եթէ ձևին նորութիւնը և եթէ գոյներուն կենդանութիւնը՝ բոլորովին նոր կու գայ մարդուս աչքին, թէպէտ և անախորժ ըզգացումն մը կու տայ տեսնողին։ Ինչպէս բնութեան բոլոր պակասաւոր արարած-

ները նաև մաղձոտ բնաւորութեամբ մը զգածեալ են, նոյնպէս նաև այս կենդանւոյս ալ բնաւորութիւնը տխուր է, դէմքը դառն և տգեղ, շատ անգամ չորցած ծառի մը ճիւղին վրայ յեցած կը կենայ գլուխը դէպ 'ի ետև ձգած, և պարանոցը ուսերուն փետուրներուն մէջ կը խոթէ անոր ծանրութեանը թեթեւութիւն մը տալու համար, անանկ որ՝ զինքը տեսնողը կը կարծէ թէ իր դժբաղդութեանցն համար խորունկ մը տածութեանց մէջ ընկղմեր է։ Ոչ ըզբաղմունք, ոչ խաղալ, ոչ զուարճութիւն և ոչ երգել ունի։ Շատ անգամ անօթութենէ ստիպեալ՝ տխրութեամբ մը կը սկսի տաժանելի գործողութեան մը ձեռք զարնել իր կերակուրը հոգալու համար, մինչդեռ ինքը շատ անգամ ուրիշներուն կերակուր կ'ըլլայ։ Պինտ պտուղներ ամենեւին չուտեր, կտուցը վտանգի մէջ չձգելու համար. անկարող է դարձեալ որ և իցէ ողջ որսի մը վրայ յարձակելու, որով կը ստիպուի որ սպասէ ուրիշ մսակեր կենդանեաց ըրած որսերէն աւելցած փըշուրներով կշտանալու, ինչպէս մեռած դիակներով որ անապատներու մէջ կը գտնէ։ Յուլի և վարազի որսորդներուն ետեւէն կը պտըտի, որպէս զի այս կենդանեաց ընդերքներովը ճարակի, որովհետև հնդկաստանցիք սովորութիւն ունին մէկէն բռնելնուն պէս փորերնին պարպել և մանրել, որպէս զի դիւրին ըլլայ տանիլը։ Պալաօ իրեն սուր հոտառութեամբը դիակներուն տեղը իմանալով, մէկէն վրայ կը հասնի և արծուոյ որկրամոլութեամբ կը լափէ իրեն գտած աւարը։ Իրեն սովորական ուտելիքներն են մողէսները, միջատները, գորտերն, ինչպէս նաև մուկն և պզտի թռչուններ, զորոնք՝ որչափ որ ալ ինքը դանդաղ և յատկռտուկ քալուածք մ'ալ ունենայ, բայց այնու հանդերձ յաջողութեամբ կը բռնէ. և որովհետև անկարելի է իրեն զանոնք մէկէն յօշել և մանրել, անոր համար երկայն ատեն ծամելեացը մէջ առած կը դարձընէ ու կը ճզմէ կակղցնելու համար, և ետքը օդուն մէջ դէպ 'ի վեր նետելով իր լայն կոկորդին մէջ կ'ընդունի զայն։

Պալաօին մինորսութեան մեծ յարմարութիւնը տեսնելով հնդկաստանցիք փոխանակ կատուի երբեմն զասիկայ կը խնամեն տներնուն մէջ, որիզով, հացով և մեղրնօք, բայց միշտ ուշադրութիւն դնելով որ որիզը լաւ հասուն ըլլայ, հացը փշրած, և միսը մանրած, որովհետև առանց ասոնց բաներուս Պալաօին կտուցին անյարմար կ'ըլլան։

Լսիոյ և Լիրիկէի կղզեաց մէջ գրեթէ տասը տեսակ մը կը գտնուի ասոնց թռչունիս, որոնք ընդհանրապէս այսպէս կը դասաւորուին ըստ իրենց եղջիւրներուն զանազանութեանը։ Լեռնի տեսակը՝ որ ամենեւին եղջիւր չունի. երկրորդ տեսակը մարմնով պզտիկ է. երրորդ տեսակը քիչ մը աւելի մեծ, և այսպէս աստիճան աստիճան երթալով կը մեծնայ, մինչև Պալաօ-ունպեղջիւր ըսուածը։

Լնութեան այսպիսի տգեղութիւնքը որչափ որ ալ մեզի իրաւունք մը տան ստգտանելու զԼրարիչը՝ այսպիսի անկատար արարածներ ստեղծելուն համար, բայց անոնց գաղտնի պատճառներուն անտեղեակ ըլլալովնիս, աւելի լաւ է զարմանալ Լստուծոյ մեծութեանը վրայ որ այնչափ բիւր տեսակ արարածներ ստեղծեր է, քան թէ ստեղծմանն ներքին պատճառը չգիտնալով մեղադիր ըլլալ յանդգնութեամբ։

Պուլոնեի նոր անտառն 'ի Բարիզ։

Լարիզու ամենէն անուանի շրջագայութեան զբօսանաց տեղն է Պուլոնեի անտառ (le Bois de Boulogne) ըսուածն քաղքին արեւմտեան կողմը. ուր կը տանի Յաղթական կամարէն սկսեալ նոր բացուած պողոտայ մը, որուն երկայնութիւնն է 1300 մէդր և լայնութիւնը 100, մէջը բովանդակելով դիմացի նեղ ճամբաներն ալ, սակաւա-